# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
## «ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-9/23» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ (ԾՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 28-ը հունիսի 2016թ.

**Բացողներ՝**

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության պետի տեղակալ, բ/ծ գնդապետ Տ. Ավետիսյանը (**ԲԱ**),
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՖՎ ՖՀ բաժնի 1-ին կարգի մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ս. Սալայանը (**ԲԱ**),

**Օրակարգը՝**

1. «ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-9/23» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքում ներկայացված հայտերը:

Սահմանված ժամկետում **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքում բեռնվել են ներքոհիշյալ մասնակիցների հայտերը, որոնք սահմանված կարգով հաստատվել և ներկայացվել են գնահատման հաջորդ փուլ.

- Սահմանված կարգով ներկայացված մասնկիցների հայտեր, որոնք ընդունվել են **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքի կողմից և համարվել են հետագա գնահատման համար ընդունելի .

| Հ/հ | Մասնակիցների անվանում |
|---|---|
| 1 | «Լիկվոր» ՓԲԸ |
| 2 | «Արֆարմացիա» ՓԲԸ |
| 3 | «Վագա ֆարմ» ՍՊԸ |
| 4 | «Եվրոֆարմ» ՍՊԸ |
| 5 | «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ |
| 6 | «Թեոֆարմա» ՍՊԸ |
| 7 | «Տոնուս Լես» ՍՊԸ |
| 8 | «Արփիմեդ» ՍՊԸ |
| 9 | «Ռիխտեր Լամբրոն» ՀՁ ՍՊԸ |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:***

**Բացող՝** Տ. Ավետիսյան

**Բացող՝** Ս. Սալայան

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3**
**«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/23» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան — 28-ը հունիսի 2016թ.
ժամը $10^{30}$

Մասնակցում էին՝ **գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ պետ, գնդապետ Վ. Գասպարյանը (ԳԱՊ),
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Կ. Սաֆարյանը (ԳԱ),
ՀՀ ԶՈՒ ՊՆ ռազմաբժշկական վարչության ԲՆՏՄ բաժնի պետ, բ/ծ փոխգնդապետ Կ. Խաչունցը (ԳԱ),
ՀՀ ՊՆ Ա ՎՎ ԸՎ բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Մուրադյանը (ԳԱ),
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Ա. Հակոբյանը (ԳԱ)
ՀՀ ՊՆ ՆԱ վարչության ԿԱ բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Խաչատրյանը (ԳԱ):

***«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4 – ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/23» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

---

1. Տեղեկություններ **www.armeps.am** կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. Էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության, բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության, յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխանության մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշելու մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:***

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

---

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Դեղորայքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/23» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել.

| Հ/հ | Մասնակիցների անվանում |
|---|---|
| 1 | «Լիկվոր» ՓԲԸ |
| 2 | «Արֆարմացիա» ՓԲԸ |
| 3 | «Վագա ֆարմ» ՍՊԸ |
| 4 | «Եվրոֆարմ» ՍՊԸ |
| 5 | «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ |
| 6 | «Թեոֆարմա» ՍՊԸ |
| 7 | «Տոնուս Լես» ՍՊԸ |
| 8 | «Արփիմեդ» ՍՊԸ |
| 9 | «Ռիխտեր Լամբրոն» ՀՁ ՍՊԸ |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:.***

**2. Էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության, բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության, յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխանության մասին.**

---

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):
***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:***

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.**

---

3.1 Մասնակիցները ներկայացրած գնային առաջարկները գնահատվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:
3.2 Հանձնաժողովը մինչև 08/07/2016թ. ուսումնասիրել է մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների

համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները, գնահատել է համապատասխան /ճիշտ է/(գույնով նշված են ԵՏՄ երկրների արտադրության առաջարկված ապրանքների գները):

3.3 Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10/02/2011թ. № 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները (ծանուցումը կցվում է)՝ մասնակիցներին հրավիրել է միաժամանակյա բանակցությունների: 13/07/16թ. կայացած բանակցության ընթացքում 21 չափաբաժնի մասով «Վագա ֆարմ» ՍՊԸ-ն առաջարկեց՝ 1,064,000 դրամ, 27,28,43 չափաբաժինների մասով «Եվրոֆարմ» ՍՊԸ-ն առաջարկեց՝ համապատասխանաբար՝ 9,000,000: 20,000: 900,000 դրամ, 21 չափաբաժնի մասով «Արֆարմացիա» ՓԲԸ-ն առաջարկեց՝ 8,112,000 դրամ, իսկ 38-րդ չափաբաժնի առաջարկած գինը իր նախաձեռնությամբ նվազեցրեց 345,000 դրամ: հանձնաժողովի որոշմամբ նշված չափաբաժիններում նվազագույն գին ներկայացրած ընկերությունները ճանաչվել են 1-ին տեղ զբաղեցնողներ 10,11,17 չափաբաժինների մասով ոչ մի ընկերություն բանակցության արդյունքում գին չի նվազեցրել՝ Հավելված № 1:

3.4 Որևէ մասնակցի գնային առաջարկ չի գնահատվել ***չհիմնավորված ցածր գնային առաջարկ***:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:***

**4. Ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշելու մասին.**

---

4.1 «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/23» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեցին ամենաէժան գնային առաջարկներ ներկայացրած կազմակերպությունները՝ Տես 3-րդ կետ

**4.2 Հանձնաժողովը 21/07/16թ. որոշեց՝**

Ա) հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Բ) ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին և հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Գ) չկայացած հայտարարել՝ առաջարկի բացակայության հիմքով՝ 3,7,20,23,25,26,34,36,44-47, իսկ պատվիրատուի մոտ առկա ֆինանսական միջոցները գերազանցելու հիմքով 10,11,17 չափաբաժինները:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:***

**5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

---

Մասնակցի կողմից հայտի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:***

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/23» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11⁰⁰-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:***

**Գնահատող՝** Վ. Գասպարյան

**Գնահատող՝** Կ. Խաչունց

**Գնահատող՝** Կ. Սաֆարյան

**Գնահատող՝** Ա. Մուրադյան

**Գնահատող՝** Ա. Հակոբյան

**Գնահատող՝** Ա. Խաչատրյան